

Մարզպետն այցելեց Արագածի և Ապարանի տարածաշրջաններ

Ապրիլի 26-ին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյան այցելեց Արագածի և Ապարանի տարածաշրջաններ: Ծաղկահովիտում, Գեղաձորում, Բերքառատում, Նորաշենում, Ձորագլխում, Թթուջրում համայնքապետերի և բնակիչների հետ հանդիպումների ընթացքում բարձրացվեցին տեղերում առկա հիմնախնդիրները: Յուրաքանչյուր համայնքում մարզպետն առանձնացրեց այն հրատապ խնդիրները, որոնց լուծումը առաջնահերթություն է ենթադրում:

Ծանոթանալով բարձրացված խնդիրներին, մարզպետը տեղում քննարկեց դրանց լուծման հնարավոր տարբերակները, տվեց համապատասխան հանձնարարականներ: